ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁԸ

Ժաննա Անդրեասյան

2. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար

3. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ

Աստանա, 2024 թվականի հոկտեմբերի 14-16-ը

4. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

Ղազախստանի մշակույթի և տեղեկատվության նախարարություն

5. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Հայաստանի Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանի Ղազախստան պաշտոնական պատվիրակության կազմում մասնակցություն Ղազախստանում Հայաստանի մշակույթի օրերին

6. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

Համագործակցության ընդլայնում մշակույթի ոլորտում: Ղազախստանի մշակույթի օրերը 2025 թվականին կազմակերպելու հարցերը: Երաժշտարվեստի, թատերարվեստի, օպերային, բալետային արվեստի և կինոարտադրության ոլորտում համագործակցությունը համատեղ նախագծերի ձևաչափով ակտիվացնելու հարցեր: Ղազախստանի Ազգային թանգարանի Ոսկե մարդու հավաքածուն Հայաստանում ցուցադրելու հնարավորությունը քննարկելու հարցեր:

Համագործակցության զարգացում բարձրագույն կրթության և գիտության բնագավառում: Ղփչաղական ձեռագրերի ուսումնասիրման հայ-ղազախական գիտական խումբ ձևավորելու և աշխատանքները սկսելու հարցեր:

Համայնքի հետ համագործակցությունը գիտության, կրթության և մշակույթի ոլորտում առավել խորացնելու հարցեր:

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

2024 թվականի հոկտեմբերի 14-16-ը Հայաստանի Հանրապետության նախագահի պաշտոնական պատվիրակության կազմում մեկնել եմ Աստանա մասնակցելու Ղազախստանում Հայաստանի մշակույթի օրերի պաշտոնական բացմանը:

Գործուղման առաջին օրը՝ հոկտեմբերի 14-ին մասնակցել եմ Հայաստանի նախագահի և Ղազախստանի հայ համայնքի հետ հանդիպմանը, որի ընթացքում Հայաստանի նախագահը մանրամասներ է ներկայացրել Հայաստանի ներքին ու արտաքին քաղաքական, տնտեսական և հասարակական կյանքի ընդհանուր իրավիճակի և զարգացումների վերաբերյալ, զրուցել է միջոցառման մասնակիցների հետ և պատասխանել նրանց հուզող հարցերին:

Հոկտեմբերի 15-ի առավոտյան այցելել եմ Ղազախստանի ազգային թանգարան, ապա մեկնել Ղազախստանի մշակույթի և տեղեկատվության նախարարություն, որտեղ գործընկերոջս՝ Աիդա Բալաևայի հետ հանդիպման ընթացքում անդրադարձել ենք հայ-ղազախական մշակութային համագործակցության հարցերին, ապա ստորագրել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Ղազախստանի Հանրապետության մշակույթի և տեղեկատվության նախարարության միջև մշակութային-հումանիտար ոլորտում 2025-2026թթ. համագործակցության միջոցառումների ծրագիրը: Երկուստեք պայմանավորվածություն ձեռք բերվեց հետագայում ընդլայնել համագործակցության ուղղությունները՝ միջոցառումների ծրագրում ներառելով թատերարվեստի և երաժշտարվեստի նախաձեռնություններ, կինոարտադրություն, թանգարանային փոխանակումներ:

Շահագրգիռ քննարկման միջոցով երկուստեք կարևորվեց մշակութային համագործակցության ներուժի առկայությունը այն իրացնելու կարևորությունը:

Ղազախստանի մշակույթի և տեղեկատվության նախարար Ա.Բալևային հրավիրեցի Հայաստան՝ ներկա գտնվելու հաջորդ տարի Հայաստանում նախատեսվող Ղազախստանի մշակույթի օրերի միջոցառումներին:

Այդ հանդիպումից հետո մեկնել եմ Ղազախստանի Մաժիլիս և Հայաստանի նախագահի պատվիրակության կազմում մասնակցել Ղազախստանի խորհրդարանի՝ Մաժիլիսի նախագահ Երլան Կոշանովի հետ ընդլայնված ձևաչափով հանդիպմանը:

Նույն օրը մեկնել եմ Ղազախստանի Քալիբեկ Կունաիշբաևի երաժշտական-դրամատիկական թատրոն, որտեղ մասնակցել եմ Սերգեյ Փարաջանովին նվիրված ֆոտոցուցահանդեսին, ապա երկու երկրների նախագահների մասնակցությամբ Ղազախստանում Հայաստանի մշակույթի օրերի բացման հանդիսավոր համերգին, որտեղ հանդես եմ եկել ողջույնի խոսքով՝ կարևորելով Հայաստանի և Ղազախստանի միջև մշակութային համագործակցության զարգացումը: Համերգային ծրագիրը, որը կատարում էին Հայաստանի պետական ջազ նվագախումբը և մեներգիչներ Ինգա Արշակյանն ու Գոռ Սուջյանը, նվիրված էր Շառլ Ազնավուրի հոբելյանին: Համերգի ընթացքում հնչեցին նաև Կոմիտասի և Առնո Բաբաջանյանի ստեղծագործությունները:

Նույն օրը երեկոյան գործընկերոջս հետ մասնակցել եմ Հայաստանի նախագահի պատվին Ղազախստանի նախագահ Կասիմ-Ժոմարդ Տոկաևի կողմից կազմակերպված պաշտոնական ընթրիքին:

Հաջորդ օրը առավոտյան Հայաստանի նախագահի պատվիրակության կազմում այցելել եմ Ղազախստանի Հանրային կառավարման ակադեմիա, որտեղ Հայաստանի նախագահը ողջունել է ակադեմիայի պրոֆեսորադասախոսական կազմին և ուսանողներին՝ հանդես գալով Հայաստանի ընդհանուր նկարագրին նվիրված դասախոսությամբ, որի շրջանակներում ներկայացրել է նաև «Խաղաղության խաչմերուկ» ծրագիրը:

Պաշտոնական հանդիպումների շրջանակներում այցելել եմ «Աստանա հաբ» տեղեկատվական տեխնոլոգիաների միջազգային պարկ: Ղազախստանի թվային զարգացման, նորարարությունների և օդատիեզերական արդյունաբերության նախարար Ժասլան Մադիևի ուղեկցությամբ Հայաստանի նախագահի հետ շրջել ենք կենտրոնում, ծանոթացել արդիական ստարտափերին: Շրջայցի ավարտին համագործակցության հուշագիր է ստորագրվել «Թումո» կենտրոնի և «Աստանա հաբի» միջև:

Նույն օրը պատվիրակության կազմում այցելել եմ «Աստանա» Միջազգային ֆինանսական կենտրոն, որին ներկա էր նաև Ղազախստանի նախագահ Կասիմ-Ժոմարտ Տոկաևը: Երկու երկրների նախագահները շրջայց են կատարել կենտրոնում և ծանոթացել նրա աշխատանքներին: Հայաստանի և Ղազախստանի նախագահների համատեղ շրջայցի շրջանակներում «Աստանա» Միջազգային ֆինանսական կենտրոնի տնօրեն Նուրխատ Կուշիմովը ներկայացրել է կենտրոնի գործունեության մանրամասները:

Նույն օրը կեսօրին առանձին հանդիպել եմ Ղազախստանի բարձրագույն կրթության և գիտության նախարար Սայասատ Նուրբեկին: Վերջինս ներկայացրեց Ղազախստանի փորձը բարձրագույն կրթության ոլորտում, մասնավորապես միջազգային հեղինակավոր համալսարանների մասնաճյուղերը Ղազախստանում բացելու, ստեղծված ակադեմիական հաբ-ի գործունեության, միջազգային հեղինակավոր բուհերի և Ղազախստանի բուհերի համատեղ գործունեության, պետություն-մասնավոր փոխգործակցության, պետության կողմից միջազգային հեղինակավոր բուհերին տրվող արտոնությունների մասին:

Ղազախստանի բարձրագույն կրթության և գիտության նախարար Ս.Նուրբեկը տեղեկացրեց, որ ներկայում Ղազախստանում 34 բուհ է գործում, ինչպես օրինակ բրիտանական Դե Մոնֆորտ և Քարդիֆի համալսարանները, կորեական Woosong համալսարանը, KAIST համալսարանը, Չինաստանի Պեկինի համալսարանը, հունգարական Debreset համալսարանը, Հոնկոնգի CityU, որտեղ սովորում են ոչ միայն Ղազախստանի, այլև ՌԴ-ի, Հնդկաստանի, Չինաստանի, Կորեայի ուսանողները: Նա նաև խոսեց բուհերի կոնսորցիումով աշխատելու մոդելի մասին՝ ընդգծելով, որ այն երկուստեք շահավետ է:

Շնորհակալություն հայտնելով գործընկերոջս այս հագեցած և բովանդակալից տեղեկատվության համար, նշեցի, որ մենք շահագրգիռ ենք այս ոլորտում համագործակցություն ծավալելու և փորձի փոխանակում իրականացնելու հարցում:

Տեղեկացրի, Հայաստանում կառուցվող Ակադեմիական քաղաքի հայեցակարգի և ընթացքի մասին: Նշեցի, որ մեզանում գիտության ոլորտի առանցքը համատեղ դրամաշնորհային ծրագրերն են և մենք կարևորում ենք, որ այդ համատեղ ծրագրերն իրականացվում եմ համալսարանների և գիտահետազոտական ինստիտուտների կողմից: Այն նպատակ ունի գիտական բաղադրիչը արմատավորել բուհական և համալսարանական համակարգում:

Գործընկերոջս տեղեկացրի, որ Հայաստանում՝ Երևանի պետական համալսարանում գործում է ղազախական մշակույթի կենտրոն և ընդգծեցի, որ շահագրգիռ են հայկական մշակույթի և հայոց լեզվի կենտրոն ունենալ Ղազախստանի համալսարաններից մեկում: Միևնույն ժամանակ տեղեկացրի, որ արդեն իսկ այդպիսի կենտրոններ ունենք 15 երկրներում: Դրանք համատեղ ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրեր են:

Առանձնակի անդրադարձա ղփչաղական ձեռագրերի ուսումնասիրման նպատակով ստեղծվող հայ-ղազախական գիտական խմբի ձևավորման հարցին:

Նույն օրը այցելեցի նաև երկու կրթական հաստատություն՝ «Սանա» մշակութային-ընտանեկան կենտրոն և «Ռիվյերա» միջազգային դպրոց: Երկու հաստատություններն էլ ձևավորվել և կառուցվել են պետություն-մասնավոր համագործակցության շնորհիվ և իրականացնում են կրթական, մարզական և մշակութային ծրագրեր, իսկ «Ռիվյերա» դպրոցը ապահովում է ամբողջական կրթություն՝ նախակրթարանից մինչև ավագ դպրոց, որն համապատասխանում է միջազգային չափորոշիչներին:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

- Ղազախստանում կայացան Հայաստանի մշակույթի օրերը:

- Մասնակցեցի Ղազախստանում Հայաստանի մշակույթի օրերի բացմանը, որին հանդես եկա ողջույնի խոսքով:

- Հանդիպում ունեցա Ղազախստանի մշակույթի և տեղեկատվության նախարար Աիդա Բալևայի հետ, որի ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց ակտիվացնել համագործակցությունը երաժշտարվեստի, թատերարվեստի, օպերային և բալետային արվեստի, կինոարտադրության բնագավառում:

- 2025 թվականին Հայաստանում կկայանան Ղազախստանի մշակույթի օրեր:

- Պայմանավորվածություն ձեռք բերվեց մինչև տարեվերջ ձևավորել ղփչաղական ձեռագրերը ուսումնասիրող համատեղ գիտական խումբ:

- Քննարկվեց Հայաստանում Ոսկե մարդու ցուցահանդեսը ներկայացնելու հնարավորությունը:

- Պայմանավորվածություն ձեռք բերվեց գիտության ոլորտում համատեղ դրամաշնորհային ծրագրեր և փորձի փոխանակումներ իրականացնելու վերաբերյալ:

- Այցելեցի «Սանա» մշակութային-ընտանեկան կենտրոն և «Ռիվյերա» միջազգային դպրոց:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ժաննա Անդրեասյան

18.10.2024

Հավելված N 2
ՀՀ վարչապետի
N 326-Ն որոշման

«Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն
որոշման

Օրինակելի ձև

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը ՀՀ ԿԳՄՍՆ

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը ՎՈ 912-Ա

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)
Ժաննա Անդրեասյան՝ նախարար

(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)

4. Գործուղման վայրը՝ Ղազախստանի Հանրապետություն (Աստանա)

5. Գործուղման ժամկետները՝ 2024թ. հոկտեմբերի 14-16-ը

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը՝

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը (ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)

(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

☐ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

☐ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Ժաննա Անդրեասյան			Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիաճառայության տեսակը	Էկոնոմ			
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	***281147***			***281.147***
Գիշերա-վարձ	Վճարը 1 օրվա համար (դոլար)	64.8			
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	25087			25.087
	Օրերի քանակը	2			
	Ընդամենը (դրամ)	***50174***			***50.174***
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (դոլար)	72			
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	27875			27.875
	Օրերի քանակը	3			
	Ընդամենը (դրամ)	***83624***			***83.624***
Այլ ծախսեր	Հակահամաճա-րակային նմուշառումների				
	Մուտքի արտոնագրի վճար				
	Այլ ծախսեր (նկարագրել)				
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		***414.945***			***414.945***

Ծանոթություն: Նախնական վճարվել է 448395 ՀՀ դրամ, ենթակա է վճարման 0 ՀՀ դրամ:

ԿԳՄՍՆ գլխավոր քարտուղար՝ **ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ**